ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.12.2019
343-89

ՀՀ առողջապահության նախարարության
«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն»
ՊՈԱԿ-ի տնօրեն պարոն Միհեր Բիշարյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Բիշարյան,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյդոյանը 2019 թվականի մարտի 1-ին դիմել էր «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 թ.-ի չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը և այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը: ՊՈԱԿ-ը 2019 թ.-ի մարտի 5-ի պաշտոնական գրությամբ մերժել էր տրամադրել տեղեկությունը՝ նշելով, թե պահանջվող տեղեկությունը աշխատողի անձնական տվյալներ են, և ՊՈԱԿ-ը իրավասու չէ փոխանցել այն՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության:

ԻԱԿ-ը 2019 թ.-ի հունիսի 17-ին կրկնակի հարցմամբ էր դիմել ՊՈԱԿ-ին՝ հայտնելով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, ուստի, ԻԱԿ-ի կողմից փնտրվող տեղեկությունը արդեն իսկ հրապարակված է եղել դեռևս 2014 թվականին, իսկ հրապարակված տեղեկությունը մեկ անգամ ևս տրամադրելու համար լրացուցիչ համաձայնության կարիք չկա, և ևս մեկ անգամ խնդրել տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական

գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը և այդ հաստիքներում ներգրավված անձանց անվանացանկը: ԻԱԿ-ի երկրորդ հարցումը ևս ՊՈԱԿ-ը նույն հիմնավորմամբ մերժել է պահանջված տեղեկության տրամադրումը՝ համարելով, որ ՊՈԱԿ-ը պատկանում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետում նշված կազմակերպությունների ցանկին և չի հրապարակում նշված տեղեկությունները:

2019 թվականի օգոստոսի 5-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանը դիմել էր Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն: Դիմումի առիթով Անձնական տվյալների պաշտպանության գործակալության նախաձեռնությամբ 2019 թվականի օգոստոսի 8-ին հարուցվել էր վարչական վարույթ(N-054/08/19):

Վարույթի արդյունքում Գործակալությունը որոշել է «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հաստիքացուցակները և աշխատակիցների ցանկը (այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 չորրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետին համապատասխան հրապարակելը կամ հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին (Որոշման ամբողջական տեքստը՝ http://www.foi.am/u_files/file/%D5%88%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4_19_09_2019.pdf):

Հաշվի առնելով այս հանգամանքը և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներն ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում ենք տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Շիրակի մարզի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի 2014 երրորդ եռամսյակի (հոկտեմբերի 1-ից-դեկտեմբերի 31-ը) հաստիքացուցակը և այդ հաստիքներով աշխատող անձանց անվանացանկը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան